ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոս, 2024 թվականի № 54-Ա

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՄԱՆՅԱ ՍԱՐԴԼԻՇՎԻԼԻԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 88-րդ հոդվածի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածը, Մանյա Սարդլիշվիլիի կողմից Հանրային հեռարձակողի խորհրդին 2024 թվականի օգոստոսի 7-ին ներկայացված աշխատանքից ազատվելու մասին դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Լուծել Մանյա Սարդլիշվիլիի և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2011 թվականի ապրիլի 26-ին կնքված աշխատանքային պայմանագիրը աշխատողի կողմից ներկայացված աշխատանքից ազատվելու մասին դիմումի հիման վրա։
2. Մանյա Սարդլիշվիլիի և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2011 թվականի ապրիլի 26-ին կնքված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2024 թվականի սեպտեմբերի 2-ից։
3. 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից Ընկերության գործադիր տնօրենի նշանակման օրն ընկած ժամանակահատվածի համար Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձ նշանակել Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-ծրագրերի տնօրեն Աննա Սարգսյանին։

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

19 օգոստոս, 2024 թվականի
ք. Երևան